ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

12/ 10421

14.09.2012թ

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ԻՐԱՎԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի՛ պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 04.09.2012 թ. 179-ի 6 հարցման տրամադրում ենք հետևյալ տեղեկատվությունը.

1. Հարցի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնական հանդիպման ժամանակ տրվող հյուրասիրության պատվերը «ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայություն» գործակալության կողմից իջեցվում է ուղիղ ծառայություն մատուցող կազմակերպությանը:
2. Մատուցվող ճաշատեսակը և խմիչքը ընտրվում է յուրաքանչյուր հյուրասիրության համար առանձին՝ ելնելով հյուրերի կամ պարվիրակության ազգային, կրոնական, տարածաշրջանային առանձնահարկություններից և նախասիրություններից, ինչպես նաև հաշվի է առնվում մատուցվող ուտեստների սեզոնայնությունը:
3. 2012 թվականի բյուջեով ՀՀ ԱԳ նախարարի աշխատակազմի համար ներկայացուցչական ծախսերի համար հատկացված է 30185.5 հազ. դրամ: Նշված գումարը նախատեսված է հուշանվերների, հանդիպումների սրահների ձևավորման, սուրճի, ջրի ձեռքբերման, ինչպես նաև խորհրդաժողովների և հյուրասիրությունների կազմակերպման համար:
4. 2012 թվականի հունվարից առ այսօր նախարարի անունից տրված պաշտոնական հյուրասիրությունների համար կատարված ծախսը կազմել է 9600.0 հազ. դրամ:

Հարգանքով՝

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ

կատարող՝ Մակար Մելիքյան
հեռ. 060 620 201